ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

COVID-19-ի պատվաստանյութ.

Ինչ է Ձեզ անհրաժեշտ իմանալ

Many Vaccine Information Statements are available in Armenian and other languages. See www.immunize.org/vis

Պատվաստանյութի վերաբերյալ շատ տեղեկատվական նյութեր հասանելի են հայերենով և այլ լեզուներով: Տես www.immunize.org/vis կայքը

1. Ինչո՞ւ պատվաստվել:

COVID-19-ի դեմ պատվաստանյութը կարող է կանխարգելել **COVID-19** հիվանդությունը: Պատվաստումը կարող է նվազեցնել COVID19-ով ծանր հիվանդանալու հավանականությունը:

COVID-19-ն առաջանում է կորոնավիրուսի պատճառով, այն կոչվում է Ծանր ընթացքով սուր շնչառական համախտանիշ-Կորոնավիրուս-2 (SARS-CoV-2), որը հեշտությամբ փոխանցվում է մի անձից մյուսին: COVID-19-ը կարող է լինել թեթևից մինչև միջին ծանրության՝ տևելով ընդամենը մի քանի օր, կամ կարող է լինել ծանր ընթացքով՝ պահանջելով հոսպիտալացում, ինտենսիվ խնամք կամ շնչառական սարք: COVID-19-ը կարող է նույնիսկ մահվան հանգեցնել:

COVID-19-ի ախտանիշները կարող են ի հայտ գալ վիրուսի հետ շփումից 2-14 օր անց: Անձը կարող է ունենալ թեթև, միջին կամ ծանր ախտանիշներ:

- Հնարավոր ախտանիշները ներառում են ջերմություն, դող, հազ, շնչարգելություն կամ շնչելու դժվարություն, ուժասպառություն, մկանների կամ մարմնի ցավեր, գլխացավ, համի կամ հոտի կորուստ, կոկորդի ցավ, քթի փակվածություն կամ հոսունություն, սրտխառնոց, փսխում և փորլուծություն:
- Ավելի լուրջ ախտանիշները կարող են ներառել շնչառության դժվարություն, կրծքավանդակում մշտական ցավի կամ ճնշման զգացողություն, շփոթմունք, արթնանալու կամ արթուն մնալու անկարողություն, գունատ, մոխրագույն կամ կապտավուն մաշկ, շրթունքներ կամ եղունգներ (կախված մաշկի երանգից):

Տարեցները և ուղեկցող բժշկական խնդիրներ ունեցող անձինք (օրինակ՝ սրտի կամ թոքերի հիվանդություն կամ շաքարախտ) ավելի հավանական է, որ ծանր տանեն COVID-19-ը:

COVID-19 հիվանդությունից հետո որոշ մարդիկ հիվանդանում են երկարատև COVID-ով, քրոնիկ հիվանդություն, որի ախտանիշները տևում են 3 ամիս և ավելի: Երկարատև COVID-ի ախտանիշները կարող են բարելավվել, վատթարանալ կամ մնալ նույնը:

COVID-19-ի դեմ պատվաստումները ժամանակին կատարած մարդիկ ծանր հիվանդանալու, հոսպիտալացման և COVID-19-ից մահվան ավելի ցածր ռիսկի են ենթակա, քան չպատվաստված մարդիկ: COVID-19-ի դեմ պատվաստումը Երկարատև COVID-ի կանխարգելման լավագույն միջոցն է:

COVID-19-ի դեմ պատվաստանյութը օգնում է օրգանիզմին սովորել պաշտպանվել հիվանդությունից և նվազեցնում է ծանր հիվանդանալու և բարդություններ ունենալու ռիսկը: Բացի այդ, COVID-19-ի պատվաստանյութերը կարող են ավելացնել պաշտպանության մակարդակը այն մարդկանց մոտ, ովքեր արդեն հիվանդացել են COVID-19-ով, ներառյալ պաշտպանություն հոսպիտալացումից, եթե նրանք նորից վարակվեն COVID-19-ով:

2. COVID-19-ի պատվաստանյութ

COVID-19-ի՝ 2024–2025թթ.-ի թարմացված պատվաստանյութը խորհուրդ է տրվում բոլորին՝ սկսած 6 ամսականից և ավելի բարձր տարիքի անձանց: COVID-19-ի դեմ պատվաստումը խորհուրդ է տրվում հղիներին, կրծքով կերակրողներին կամ այս պահին հղիանալ փորձող կամ ապագայում հղիանալու պլաններ ունեցող անձանց:

6 ամսականից մինչև 11 տարեկան երեխաների համար 2024-2025թթ. COVID-19-ի պատվաստանյութերը հասանելի են ԱՄՆ Սննդի և դեղորայքի վարչության (FDA) հատուկ օգտագործման համար նախատեսված թույլտվությամբ: Մանրամասների համար խնդրում ենք օգտվել Ստացողների և խնամողների համար փաստաթղթերի լրացուցիչ տեղեկություններից:

12 և ավելի տարեկան անձանց համար 2024-2025թթ. ModernaTX, Inc.-ի կամ Pfizer, Inc.-ի կողմից արտադրվող COVID-19-ի պատվաստանյութերը հաստատվել են FDA-ի կողմից:

Նովավաքս COVID-19 Օժանդակ (2024–2025 թթ. բանաձև) պատվաստանյութը հասանելի է FDA-ի հատուկ օգտագործման թույլտվությամբ 12 և ավելի տարեկան անձանց համար: Մանրամասների համար խնդրում ենք օգտվել Ստացողների և խնամողների համար փաստաթղթերի լրացուցիչ տեղեկություններից:

- **6 ամսական և ավելի բարձր տարիքի բոլոր անձանց** խորհուրդ է տրվում ստանալ 2024–2025 թթ. FDA-ի կողմից հաստատված կամ թույլատրված տարիքին համապատասխան COVID-19 պատվաստանյութ:
- **Բժշկական խնդիրներ ունեցող կամ իմունային համակարգի վրա ազդող դեղեր ընդունող մարդիկ** կարող են ստանալ COVID-19-ի դեմ պատվաստանյութի լրացուցիչ դեղաչափեր: Ձեր առողջապահության մատակարարը կարող է խորհուրդ տալ Ձեզ:.

U.S. CENTERS FOR DISEASE CONTROL AND PREVENTION

3. Խոսեք Ձեր առողջապահության մատակարարի հետ

Տեղեկացրեք ձեր պատվաստում իրականացնողին, եթե պատվաստվող անձը՝

- Ունեցել է ալերգիկ ռեակցիա **COVID-19-ի պատվաստանյութի նախորդ դեղաչափից հետո**, կամ ունի որևէ ծանր, կյանքին վտանգ սպառնացող ալերգիա
- Ունեցել է **միոկարդիտ** (սրտամկանի բորբոքում) կամ **պերիկարդիտ** (սրտի արտաքին թաղանթի բորբոքում)
- Ունեցել է **բազմահամակարգային բորբոքային համախտանիշ** (կոչվում է MIS-C երեխաների և MIS-A մեծահասակների մոտ)

Որոշ դեպքերում Ձեր առողջապահության մատակարարը կարող է որոշել հետաձգել COVID-19-ի պատվաստումը մինչև հաջորդ այցելությունը:

Թեթև հիվանդություններ ունեցող մարդիկ, օրինակ՝ հարբուխ, կարող են պատվաստվել: Միջին կամ ծանր հիվանդ մարդիկ, այդ թվում COVID-19-ով հիվանդները, պետք է պատվաստանյութ ստանան առողջանալուց հետո միայն:

COVID-19-ի դեմ պատվաստանյութը կարող է ներարկվել այլ պատվաստանյութերի հետ միաժամանակ:

4. Պատվաստանյութից առաջացող ռեակցիաների ռիսկերը

- COVID-19-ի դեմ պատվաստումից հետո կարող է առաջանալ ցավ, այտուց կամ կարմրություն ներարկման հատվածում, ջերմություն, հոգնածության զգացողություն, գլխացավ, դող, մկանային ցավ, հողացավ, սրտխառնոց, փսխում և այտուցված ավշային հանգույցներ:
- Միոկարդիտը (սրտամկանի բորբոքում) կամ պերիկարդիտը (սրտի արտաքին թաղանթի բորբոքում) հազվադեպ է պատահել COVID-19-ի պատվաստումից հետո: Այս ռիսկերն առավել հաճախ նկատվել են դեռահաս և երիտասարդ տղամարդկանց մոտ: Այս երևույթների հավանականությունը ցածր է:

Մարդիկ երբեմն ուշագնաց են լինում բժշկական միջամտություններից հետո, ներառյալ պատվաստումը: Տեղեկացրեք Ձեր առողջապահության մատակարարին, եթե գլխապտույտ, տեսողության փոփոխություններ կամ ականջներում զնգոց ունեք:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի պատվաստանյութի դեպքում ևս ծանր ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասվածքի կամ մահվան առաջացման փոքր հավանականություն կա:

V-safe-ն անվտանգության մշտադիտարկման համակարգ է, որը Ձեզ թույլ է տալիս Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնի (CDC)-ի հետ կիսվել, թե ինչպես եք Դուք կամ Ձեր խնամյալը զգում COVID-19-ի պատվաստանյութ ստանալուց հետո: Կարող եք տեղեկություններ գտնել և գրանցվել V-Safe-ում՝ vsafe.cdc.gov:

5. Ի՞նչ անել լուրջ խնդրի դեպքում:

Ալերգիկ ռեակցիա կարող է առաջանալ այն բանից հետո, երբ պատվաստված անձը հեռանա կլինիկայից: Եթե լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ եք նկատում (եղնջացան, դեմքի և կոկորդի այտուց, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն), զանգահարեք **911** և տեղափոխեք անձին մոտակա հիվանդանոց:

Եթե պատվաստված անձը COVID-19 պատվաստումից հետո զգում է կրծքավանդակի ցավ, շնչարգելություն կամ արագ բաբախող, թրթռացող սրտի զգացում, անհապաղ դիմեք բժշկական օգնության: Սրանք կարող են լինել միոկարդիտի կամ պերիկարդիտի ախտանիշներ:

Ձեզ մտահոգող այլ նշանների դեպքում զանգահարեք Ձեր բժշկին:

Անբարենպաստ ռեակցիաների/հակառակ ազդեցությունների մասին պետք է հայտնել Պատվաստանյութերի անբարենպաստ ազդեցությունների վերաբերյալ հաշվետվությունների համակարգին (VAERS): Սովորաբար այս հաշվետվությունը ներկայացնում է Ձեր բժիշկը կամ կարող եք ինքներդ դա անել: Այցելեք VAERS -ի կայք՝ www.vaers.hhs.gov, կամ զանգահարեք **1-800-822-7967**: *VAERS -ը միայն ռեակցիաների/ազդեցությունների մասին հաղորդելու համար է, VAERS -ի աշխատակազմը բժշկական խորհրդատվություն չի տրամադրում:*

6. Վնասվածքների փոխհատուցման հակամիջոցների ծրագիր

Վնասվածքների փոխհատուցման հակամիջոցների ծրագիրը (CICP) դաշնային ծրագիր է, որը կարող է փոխհատուցել բժշկական խնամքի դիմաց և այլ հատուկ ծախսեր այն մարդկանց համար, ովքեր լուրջ տուժել են որոշ դեղամիջոցներից կամ պատվաստանյութերից, ներառյալ այս պատվաստանյութը: Սովորաբար, հայցը պետք է ներկայացվի CICP-ին պատվաստանյութը ստանալու օրվանից մեկ (1) տարվա ընթացքում: Այս ծրագրի մասին ավելին իմանալու համար այցելեք ծրագրի կայք՝ www.hrsa.gov/cicp կամ զանգահարեք **1-855-266-2427**

7. Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Դիմեք Ձեր առողջապահության մատակարարին:
- Զանգահարեք Ձեր՝ տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն:
- Սննդի և դեղորայքի վարչության (FDA) կայք՝ COVID-19-ի տեղեկատվական թերթիկների, փաթեթավորման ներդիրների և լրացուցիչ տեղեկությունների համար՝ www.fda.gov/emergency-preparedness-and-response/coronavirus-disease-2019-covid-19/covid-19-vaccines:
- Կապ հաստատեք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (CDC) հետ՝
  - Զանգահարեք **1-800-232-4636** (**1-800-CDC-INFO**) հեռախոսահամարով կամ
  - Այցելեք CDC-ի COVID-19 պատվաստանյութերի կայքը՝ www.cdc.gov/covid/vaccines/index.html:

Armenian translation provided by Immunize.org